ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ԼԱՆՋԱԶԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արարատի մարզ գ. Լանջազատ /Զովաշեն/

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ 18 - Ն

N 18
/ավագանու հերթական համար/ օրակարգի հարցի համարը/

02.12. 2013թ.

2014թ .ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք՝ ղեկավարվելով «ՀՀ տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ , 10 –րդ հոդվածներով և առաջնորդվելով ՏԻՄ օրենքի 16 հոդվածի 18 կետի պահանջներով .

ՀՀ Արարատի մարզի Լանջազատ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը՝

1. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտա-
   ռապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ ոչ հիմնական) , շինության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝ հիմնական օբյեկտների համար՝
   ա) մինչև 300 քառ. մ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառ. մ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար - 1000 դրամ
   բ) սույն կետի "ա" ենթակետով չնախատեսված օբյեկտների համար
   բ.ա) 201 –ից մինչև 500 քառ. մ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ - 1500 դրամ
   բ.բ) 501 –ից մինչև 1000 քառ. մ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ - 2000 դրամ
   բ. գ) 1001 և ավելի քառ. մ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար - 2500 դրամ

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ) մինչև 20 քառ. մ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար - - 1000 դրամ

դ) 20 և ավելի քառ.մ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար - 1500 դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի և շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, արդիականացման աշխատանքների (բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված շինարարական թույլտվություն չպահանջող դեպքերի համար) եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով

ա) չի նախատեսվում կառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքի գործառնական նշանակության փոփոխություն - 1000 դրամ:

բ) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա բացի սույն կետի "ա" ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում է նաև նոր շինարարության համար սույն որոշման 1 կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով

գ) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարության կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով

դ) նախատեսվում է միայն կցակառույցների, շենքերի գործառնական նշանակության փոփոխության, ապա սույն օրենքի իմաստով այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն որոշման 1 կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝ - 1000 դրամ

4. Համայնքի տարածքում՝

1) ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար տեղական տուրքը սահմանվում է - 2000 դրամ

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար տեղական տուրքը սահմանվում է - 2000 դրամ

5. Համայնքի տարածքում՝

ա) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար քմ. [illegible] - 350 դրամ

բ) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նաֆթային գազերի մանրածախ առևտրի կետերում վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ - 150000 դրամ

6. Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները) և խաղատները ժամը 24 : 00 –ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝
   ա) առևտրի օբյեկտների համար - 25000 դրամ
   բ) շահումներով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման համար -250000 դրամ
   գ) բաղնիքի (սաունաների) համար - 200000 դրամ
   դ) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար – 50000 դր.
   ե) խաղատների համար՝ - 500000 դրամ
7. Այլ արտաքին գովազդի համար 5000 դրամ:

8. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեներ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝- 1000 դրամ

9. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ - 1000 դրամ

10. Գյուղապետարանի կողմից աճուրդներ և մրցույթներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից մուտքի վճար որպես տեղական վճար սահմանվում է - 2000 դրամ:
11. Համայնքի տարածքում աղբահանությունը կազմակերպելու համար համայնքի բնակչությունից՝ յուրաքանչյուր շնչից ամսեկան տուրքը սահմանվում է՝ - 50 դրամ:

Մեկ, երկու, երեք կետերի փոխարեն կիրառված է 0.5 գործակիցը:

Ավագանուն անդամներ՝ /ստորագրություններ՝ կողմ, դեմ, ձեռնպահ, նշելով բոլորի անուն, ազգանունները , ներառյալ բացակաները/

1. Գ. Հարությունյան կողմ
2. Մ. Սարգսյան կողմ
3. Հ. Հովհաննիսյան կողմ
4. Կ. Բաբախանյան կողմ
5. Էդ. Հովհաննիսյան կողմ
6. Ս. Սուլոյան կողմ
7. Հ. Հակոբջանյան կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. Հակոբջանյան